

նենար պիտի յամառութեան, պինդգլուխութեան հոյակապ կառույցի մը հետ, որ գործն էր ամէնուն, բանուորին ու զաւառական ժողովոյ անդամներուն, չրջանի վանքերու վարդապետներուն, ինչպէս քրտական աւանի մը մէջ խեղդուած ժամու մը տէրտէրին: Վասպուրականի գաղափարական միջնորդ՝ րտը խնկաւէտ բան էր սա նախիր հոտող մտայնութեան հետ բաղդատուած: Մէկ բան միայն հաճելի էր սա մարդոց վրայ, - իրենց անսահման անկեղծութիւնը: Անոնք վանեցիներուն նման յեղափոխութիւնը մտքէ չէին անցներ փերեգակել: Կը հաւատային անոր: Ջարդե՞րը: Այո՛: Բայց լեռնե՞րը, որոնց կատարները կը բրգանային միջոցն ի վեր, ճերմակ ու անյաղթ, իրենց փառքերուն մէջ շղթայուած Մհերներուն անմահ փաղանգովը: Եւ ուր կը պտտէին անոնց ստուերները արդէն: Անիկա մատնուեցաւ հոն ալ, միշտ իր մարմինէն: Իր երեւումը անգամ մըն ալ ամրացուց այդ մարդոց մէջ խոր այն վստահութիւնը, զոր լերան կռուողները եւ գեղերու երիտասարդները բնագոյով կը զգային Կեղրոնէն զրկուած կիսաւեր ձեւերուն, գործիչներուն դէմ: Անշուշտ կուսակցութիւնները մեծ մարդեր գործածեցին իրենց այս երկրային ձեռնարկներուն մէջ: Բայց անոնք ուրիշ դասակարգի մը կը պատկանին: Մահը զանոնք սրբացուցած է իրենց շրջաններուն մէջ, նահատակի լուսապսակով մը բոլորելով անոնց յիշատակը:

Տխուր եղան Մաթիկին պէս միջոցները, մա՛նաւանդ՝ երբ մտքի իրենց տուրքերուն անբաւականութեան միացաւ մարմնականն ալ: Քիչ մնաց Մաթիկը ուտէր ծեծ վարդապետէ մը, որ անպատեհ գտած էր անոր մօրուքը, նախ՝ կարգաւոր մը, ծերացած թուրք մը չրլլալուն, երկրորդ՝ կասկածին հաշուոյն, որ անխուսափելի էր ամէն օտար դէմքէ, այդ ափ մը քաղաքին մէջ: Ընկեր Մաթիկը դառնութեամբ կը հաստատէր, թէ կ'ապրէր Տաճկաստան, այսինքն՝ բռնութեան երկիրը, ուր մարդիկ ուրիշը կը ծեծեն, ինչպէս կ'ընէին ատիկա պարսիկները հարիւր տարի առաջ: Անշուշտ պաշտպանեց իր մօրուքիկը, զայն